Արմավիրի մարզի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն՝ Զ.Ստեփանյան

Թեմատիկ պլանավորում

2023-2024 ուստարի

Տարեկան

Առարկան Հայոց եկեղեցու պատմություն

Դասարան XI

Ժամաքանակ 68 ժամ

Ուսուցիչ Վերժիկ Հարությունյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝ Ս.Հարությունյան

Համապատասխանում է պետական չափորոշչին և ծրագրին

Մ/մ նախագահ՝ Վ.Սարգսյան

Հայոց եկեղեցու պատմություն

XI դասարան (68 ժամ)

Դասի N /ժամ	Դասի բաժինը, թեման, նյութը	Սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջները ըստ Ա, Բ, Գ մակարդակների	էջ
1/1	Ներածություն		
ԹԵՄԱ I. ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ, ԱՐԺԵՔՆԵՐ			
2/1	Աշխարհայացք, արժեքներ: Ի՞նչ է աշխարհայացքը. արժեքներ:	Ա մակարդակ Իմանա՝ ինչպես է ձևավորվում աշխարհայացքը Կարողանա՝տարբերել աշխարհայացքի երեք աստիճանները, դրանց փոխկապակցվածությունը Բ մակարդակ Իմանա՝ «արժեք» հասկացությունը Կարողանա՝ ցույց տալ ազգային և համամարդկային արժեքների փոխադարձ կապը Գ մակարդակ Իմանա՝ «աշխարհայացք» և «արժեք» հասկացությունները Կարողանա՝ սահմանել քրիստոնյայի աշխարհայացքի առանձնահատկությունները	Սովորել §17, էջ 5-8
3/1	Աշխարհայացք, արժեքներ: Ի՞նչ է աշխարհայացքը. արժեքներ:		Սովորել §17, էջ 8-9
ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆԱՐԺԵՔՆԵՐԻՀԱՄԱԿԱՐԳԸ			
4/1	Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը:	Ա մակարդակ Իմանա՝ քրիստոնեության ընդունման պատմական անհրաժեշտությունը և տեսական հիմնավորվածությունը Կարողանա՝ պարզաբանել արտաքին արժեքային նկրտումներին դիմակայելու անհրաժեշտությունը Բ մակարդակ Իմանա՝4-20-րդ դդ առաջացած վտանգները և դրանք հաղթահարելու պատմական ընթացքը Կարողանա՝ օրինակներով հիմնավորել քրիստոնեության դերը Գ մակարդակ Իմանա՝ հայ ժողովրդի վերջնական մշակութային կողմնորոշումը Կարողանա՝ ամբողջական պատկերացում տալ	Սովորել §2, էջ 11-14
5/1	Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը:		Սովորել §2, էջ 14-17

		քրիստոնեական արժեքային համակարգի ձևավորման գործընթացի մասին	
6/1	Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպման ձևերն ու սկզբունքները:	Ա մակարդակ Իմանա՝ Ազգային եկեղեցական կյանքը և նրա առջև ծառացած խնդիրները Կարողանա՝ ցույց տալ Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպման մոդելի ձևավորման առանձնահատկությունները Բ մակարդակ Իմանա Ազգային եկեղեցական կյանքի տեսական բնագավառը Կարողանա՝ հասարակական-եկեղեցական կյանքը ստորաբաժանել բնագավառների Գ մակարդակ Իմանա՝ հայոց եկեղեցու դիրքորոշումը Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպման մեջ Կարողանա՝ կարևորել ընդհանրական և հայկական եկեղեցական կանոնների տարանջատումը	Սովորել §3, էջ 20-24
7/1	Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպման ձևերն ու սկզբունքները:		Սովորել §3, էջ 20-24
8/1	Ազգային հոգևոր նկարագիր: Ազգային հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը: Ազգային հոգևոր նկարագրի կառուցվածքը:	Ա մակարդակ Իմանա՝ ինչ է ազգային հոգևոր նկարագիրը Կարողանա՝ ձևավորել ամբողջական պատկերացում ազգային-հոգևոր նկարագրի բովանդակության և կառուցվածքի մասին Բ մակարդակ Իմանա՝ ազգային-հոգևոր նկարագիրը ձևավորող հատկանիշները առանձնակի կարևորելով լեզվի և հավատի նշանակությունը Կարողանա՝ ներկայացնել հայ ժողովրդի պատմական միջավայրը, գործոնները ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման մեջ Գ մակարդակ Իմանա՝ ազգային-հոգևոր նկարագրի բաղադրատարերը Կարողանա՝ ամբողջական պատկերացում տալ այդ բաղադրատարրերի մասին	Սովորել §4, էջ 26-31
9/1	Ազգային հոգևոր նկարագիր: Ազգային հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը: Ազգային հոգևոր նկարագրի կառուցվածքը:		Սովորել §4, էջ 26-31
ԹԵՄԱ III. ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ			
10/1	Թեմատիկ աշխատանք N1		
11/1	Ազգ: Ազգ հասկացությունը:	Ա մակարդակ Իմանա՝«ազգ» հասկացությունը, նրա բնորոշ հատկանիշները	Սովորել §5, էջ 34-36

12/1	Ազգ: Ազգ հասկացությունը:	Կարողանա՝ հիմնավորել, որ ազգը հիմնարար արժեք է Բ մակարդակ Իմանա՝էթնոս հասկացությունը Կարողանա՝ պատմական նյութի հիման վրա ցույց տալ էթնոսների զարգացման փուլերը, ազգերի առաջացման և գոյատևման պայմանները ու գործոնները Գ մակարդակ Իմանա՝ ազգին բնորոշ հատկանիշները Կարողանա՝ ազգային հատկանիշները մեկնաբանել հայերի օրինակով	Սովորել §5, էջ 36-41
13/1	Հայրենիք:	Ա մակարդակ Իմանա՝ երբ է ձևավորվել «հայրենիք» բառը Կարողանա՝ հայերի օրինակով ներկայացնել հայրենիք հասկացության ժամանակային-տարածքային ընդգրկումները Բ մակարդակ Իմանա՝ հայոց եկեղեցու դերը հայրենիքի ձևավորման գործում Կարողանա՝ ցույց տալ, որ հայության գոյատևումն ու զարգացումը հնարավոր է միայն սեփական հայրենիքում Գ մակարդակ Իմանա՝ ազգ-հայրենիք կապը Կարողանա՝ հայրենիքը դիտարկել որպես ազգի գոյատևման առհավատչյա	Սովորել §6, էջ 43-48
14/1	Հայրենիք:		Սովորել §6, էջ 43-48
15/1	Գործնական աշխատանք N1		
16/1	Հայրենասիրություն, ազգասիրություն, անձնազոհություն:	Ա մակարդակ Իմանա՝ ինչ է հայրենասիրությունը, ազգասիրությունը և անձնազոհությունը Կարողանա՝ պարզաբանել, որ այդ հատկանիշների շնորհիվ է յուրաքանչյուր ազգ գոյատևում Բ մակարդակ Իմանա՝ ինչ է զինվորականի պատվո վարքականոնը և վեր հանի դրա արդիական նշանակությունը Կարողանա՝ պատմական օրինակներով ներկայացնել հայերի ռազմական հատկանիշների մասին օտարների գնահատականը Գ մակարդակ Իմանա՝ յուրաքանչյուր ազգի համար հայրենիքի կարևորությունը Կարողանա՝ հայրենասիրական օրինակներ սերմանել շրջապատի մեջ	Սովորել §7, էջ 51-54
17/1	Հայրենասիրություն, ազգասիրություն, անձնազոհություն:		Սովորել §7, էջ 54-57

18/1	Ազատություն, անկախություն, պետականություն:	Ա մակարդակ Իմանա՝ ինչ է ազատությունը, անկախությունը և պետականությունը Կարողանա՝ բացատրել, որ ազատությունը ազգերի ինքնուրույն ապրելու իրավունքն է Բ մակարդակ Իմանա՝ հայոց եկեղեցու դերը հայկական պետականության ստեղծման և պահպանման գործում Կարողանա՝ պատմության էջերը թերթելով հիմնավորել եկեղեցու դերը Գ մակարդակ Իմանա՝ ազատության և արդարության սկզբունքների գործնական կիրառման և սեփական անկախ ազգային պետություն ունենալու կարևորությունը Կարողանա՝ կարևորել պետության գոյության համար միասնության, արդարության և համերաշխության կարևորությունը	Սովորել §8, էջ 59-61
19/1	Ազատություն, անկախություն, պետականություն:		Սովորել §8, էջ 61-64
20/1	Ընտանիք:	Ա մակարդակ Իմանա՝ ընտանիքի դերը հավատքի և ազգի պահպանման գործում Կարողանա՝ ընդգծել Հայոց եկեղեցու դերը ընտանիքի պահպանման գործում Բ մակարդակ Իմանա՝ պսակի խորհուրդը Կարողանա՝ ընտանիք-պսակ կապը հիմնավորել Գ մակարդակ Իմանա՝ հայկական միջավայրի վերաբերմունքը ընտանիքի նկատմամբ Կարողանա՝ ընտանիքի որակի, քանակի, ամրության համեմատություններ կատարել ավանդական և ներկայիս ընտանիքների միջև	Սովորել §9, էջ 66-71
21/1	Ընտանիք:		Սովորել §9, էջ 66-71
ԹԵՄԱ IV. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆՄՇԱԿՈՒՅԹԸ			
22/1	Մշակույթը և ազգային-հոգևոր արժեքների պահպանումն ու վերարտադրությունը:	Ա մակարդակ Իմանա՝ազգային մշակույթ հասկացությունը, ազգային մշակույթի էլիտար շերտը Կարողանա՝ պարզաբանել մշակույթ և քաղաքակրթություն հասկացությունները, էլիտար շերտի էությունն ու հասարակական նշանակությունը	Սովորել §10, էջ 72-76

23/1	Մշակույթը և ազգային-հոգևոր արժեքների պահպանումն ու վերարտադրությունը:	Բ մակարդակ Իմանա՝ ազգ-մշակույթ փոխադարձ կապը Կարողանա՝ ցույց տալ, որ հայկական մշակույթը խարսխված է քրիստոնեական-ազգային արժեհամակարգի վրա Գ մակարդակ Իմանա՝ ազգային մշակույթի էթնոպաշտպան գործառույթը, մշակույթի մշտական զարգացման անհրաժեշտությունը Կարողանա՝ նպաստել ազգային մշակույթի զարգացման կարևորությունը	Սովորել §10, էջ 76-80
24/1	Փիլիսոփայություն:	Ա մակարդակ Իմանա՝ ինչ է փիլիսոփայությունը Կարողանա՝ ներկայացնել փիլիսոփայության տարբեր ուղղությունները Բ մակարդակ Իմանա՝ փիլիսոփայության ուրույն դերը հայկական մշակույթի մեջ Կարողանա՝ փիլիսոփայության սկզբնավորման ու զարգացման փուլերը կապել պատմական տարբեր դարաշրջանների հետ Գ մակարդակ Իմանա՝ հայ փիլիսոփաների աշխատանքները Կարողանա՝ համեմատել հայ և համաշխարհային փիլիսոփաների գաղափարները, գտնել նմանություններ և տարբերություններ	Սովորել §11, էջ 82-86
25/1	Փիլիսոփայություն:		Սովորել §11, էջ 86-89
26/1	Թեմատիկ աշխատանք N2		
27/1	Եկեղեցական մատենագրություն:	Ա մակարդակ Իմանա՝ եկեղեցական մատենագրության ընդհանուր բնութագիրը Կարողանա՝ վեր հանել տարբեր ուղղությունների դերն ու նշանակությունը հայ հոգևոր մշակույթի զարգացման գործում Բ մակարդակ Իմանա՝ եկեղեցական մատենագրության բաժինները Կարողանա՝ երկերը դասակարգել ըստ այդ բաժանումների և դրանց չափորոշիչների Գ մակարդակ Իմանա՝ ինչ են մեկնողական, ջատագովական, հակաճառական, սրբախոսական գրականություն, ճառեր, քարոզներ, ծիսական երկերը Կարողանա՝ ցույց տալ այդ բաժինների կապը	Սովորել §12, էջ 91-98

28/1	Գործնական աշխատանք N2		
29/1	Կրկնություն		
30/1	Ամփոփիչ կրկնություն		
31/1	Հայ պատմագրությունը V-XX դդ.:	Ա մակարդակ Իմանա՝ ինչ է պատմագրությունը, որն է պատմագրության դերը հայոց արժեհամակարգի ձևավորման, պահպանման և փոխանցման գործում Կարողանա՝ ներկայացնել պատմագրությունն ու դրա զարգացումը Բ մակարդակ Իմանա՝ պատմագրության զարգացման փուլերը Կարողանա՝ պատմական երկերը դասակարգել ըստ ժամանակաշրջանների և պատվիրատուների Գ մակարդակ Իմանա՝ հայ պատմագրության ուրույն դերը համաշխարհային պատմագրության մեջ Կարողանա՝ հայ պատմագրությունը տարբերել համաշխարհային պատմագրությունից	Սովորել §13, էջ 99-103
32/1	Հայ պատմագրությունը V-XX դդ.:		Սովորել §13, էջ 104-108
33/1	Հայ գրչության արվեստը:	Ա մակարդակ Իմանա՝ հայ գրչության արվեստը, գրատեսակները Կարողանա՝ տարբերել երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր, շղագիր գրատեսակները Բ մակարդակ Իմանա՝ գրչության մեջ օգտագործվող համառոտագրությունները, կցագրությունները և փակգրերը Կարողանա՝ օգտագործել առոգանության նշանները, գրերի թվային արժեքները և հայկական տոմարը Գ մակարդակ Իմանա՝ հայ ժողովրդի վերաբերմունքը ձեռագիր մատյանի և ընդհանրապես գրի, գրչության նկատմամբ Կարողանա՝ պատմության էջերը թերթելով կարևորել գրի դերը	Սովորել §14, էջ 111-113
34/1	Հայ գրչության արվեստը:		Սովորել §14, էջ 114-116
35/1	Մանրանկարչություն:	Ա մակարդակ Իմանա՝ ինչ է մանրանկարչությունը Կարողանա՝ ներկայացնել ձեռագիրը մշակելու արվեստը Բ մակարդակ Իմանա՝ գրչության արվեստի և մանրանկարչության կապը	Սովորել §15, էջ 118-122

36/1	Մանրանկարչություն:	Կարողանա՝ նշել պետական կառույցների, ազնվականության և եկեղեցու դերը մշակույթի զարգացման գործում Գ մակարդակ Իմանա՝ մանրանկարչության խորհրդաբանությունը՝ որպես քրիստոնեական աշխարհայացքի գեղարվեստական արտահայտություն Կարողանա՝ զանազանել մանրանկարչական դպրոցները և այդ դպրոցները ներկայացնող անհատականություններին	Սովորել §15, էջ 118-122
37/1	Գործնական աշխատանք N1		
38/1	Խորհրդանիշներ:	Ա մակարդակ Իմանա՝ խորհրդանիշի սահմանումը Կարողանա՝ բերել օրինակներ, որոնք կարող են խորհրդանիշ դառնալ տվյալ ազգի համար Բ մակարդակ Իմանա՝ ազգի բնատարածքը, լեզուն, մարդաբանական առանձնահատկությունները, դյուցազնավեպը, գրականության, ճարտարապետության և արվեստի մեծագույն ձեռքբերումները ազգային խորհրդանիշներ են Կարողանա՝ խորհրդանիշները դիտարկել որպես ազգը մյուսներից առանձնացնող տարբերանշաններ Գ մակարդակ Իմանա՝ ազգային, պատմաաշխարհագրական, պետական խորհրդանիշները Կարողանա՝ ներկայացնել խորհրդանիշների խորհրդաբանությունը	Սովորել §16, էջ 124-129
39/1	Խորհրդանիշներ:		Սովորել §16, էջ 129-135
40/1	Թեմատիկ աշխատանք N1		
41/1	Խաչքար:	Ա մակարդակ Իմանա՝ խաչքարային արվեստի սկզբնավորումն ու զարգացումը Կարողանա՝ բացատրել խաչքարի կառուցվածքը, տեսակները Բ մակարդակ Իմանա՝ խաչքարերի կառուցման եղանակների և խաչքարագործ վարպետների մասին Կարողանա՝ կարևորել խաչքարի դերը հայ ժողովրդի և համամարդկային մշակութային ժառանգության մեջ Գ մակարդակ Իմանա՝ խաչքարի խորհրդաբանությունը	Սովորել §17, էջ 137-142
42/1	Խաչքար:		Սովորել §17, էջ 143-144

		Կարողանա՝ ներկայացնել խաչքարերի կառուցման նպատակները	
43/1	Ճարտարապետություն:	Ա մակարդակ Իմանա՝ հայկական ճարտարապետության բնորոշ առանձնահատկությունները Կարողանա՝ թվել մի քանի եկեղեցիներ Բ մակարդակ Իմանա՝ ճարտարապետության վրա ազգային և հավատքային ազդեցությունը Կարողանա՝ հայկական ճարտարապետությունն առանձնացնել համաշխարհային ճարտարապետությունից Գ մակարդակ Իմանա՝ հայկական ճարտարապետության սկզբնավորումը, զարգացման փուլերը, յուրաքանչյուր դարաշրջանին բնորոշ գծերը և ճարտարապետական դպրոցները Կարողանա՝ ճարտարապետական դպրոցները բաժանել ըստ տարածաշրջանների և ժամանակաշրջանների	Սովորել §18, էջ 146-150
44/1	Ճարտարապետություն:		Սովորել §18, էջ 150-154
45/1	Հայ երաժշտական մշակույթը:	Ա մակարդակ Իմանա՝ երբ և ինչպես է ձևավորվել ազգային երաժշտությունը Կարողանա՝ ներկայացնել երաժշտության տեսակները, դրանց բնորոշ առանձնահատկությունները Բ մակարդակ Իմանա՝ ինչ է հոգևոր երգերի ժողովածուն Կարողանա՝ նշել հոգևոր երաժշտության զարգացման ձեռքբերումները Գ մակարդակ Իմանա՝ քրիստոնեության մուտքը որակական փոփոխություններ բերեց հայկական երգարվեստի մեջ Կարողանա՝ առանձնացնել զարգացման փուլերը	Սովորել §19, էջ 156-159
46/1	Հայ երաժշտական մշակույթը:		Սովորել §19, էջ 159-163
47/1	Թեմատիկ աշխատանք N2		
48/1	Աստվածաշունչ մատյան: Հին Կտակարան:	Ամակարդակ Իմանա՝ «Աստվածաշունչ» մատյանի՝ որպես քրիստոնյաների Սուրբ գրքի, «Աստվածաշունչ» մատյանի հատվածների, Հին և Նոր Կտակարանների գրքերի քանակի, հայերեն թարգմանության հեղինակների մասին: Կարողանա՝ նշել «Աստվածաշունչ» մատյանի բովանդակության հիմնական	5-րդ դաս. դասագիրք, էջ 9-33
49/1	Աստվածաշունչ մատյան: Նոր		5-րդ դաս.դաս

	Կտակարան:	առանձնահատկությունները: Բ մակարդակ Իմանա՝ Աստվածաշնչի ստեղծման ընթացքի, տարածման, Նոր Կտակարանի հեղինակների, գրքերի հիմնական բովանդակության մասին Աստվածաշնչի հայերեն տպագրության տարեթիվը: Կարողանա՝ արժևորել «Աստվածաշունչ» մատյանի հայերեն թարգմանության կարևորությունը: Գ մակարդակ Իմանա՝ «Աստվածաշունչ» մատյանի հիմնական գաղափարի, Հին և Նոր Կտակարանների գրքերի և նրանց հիմնական բովանդակության մասին: Կարողանա՝ երկայացնել Հին և Նոր Կտակարանների գրքերի առանձնահատկությունները:	ագիրք, էջ 37-80
50/1	Հայ առաքելական եկեղեցու խորհուրդները:	Ա մակարդակ Իմանա՝ Հայոց եկեղեցու խորհուրդները, յուրաքանչյուր խորհուրդի նպատակը, մկրտության և դրոշմի խորհուրդների միասնական անվանումը, հաղորդության խորհուրդը որպես պատարագի հիմնական առանցք լինելու մասին: Կարողանա՝ բացատրել և հիմնավորել մկրտության խորհրդի որպես առանցքային խորհուրդ նշանակությունը: Բ մակարդակ Իմանա՝ պարտադիր և կամավոր խորհուրդները, յուրաքանչյուրխորհրդիկատարման ընթացքը, վայրը, կրկնելիության հնարավորությունը: Կարողանա՝ բացատրել խորհուրդ, ձեռնադրություն, նարոտ, կնունք, կնքահայր, դրոշմ, մյուռոն, ապաշխարություն, մեղք, զղջում, խոստովանություն, քավություն, թողություն, նշխար, բաղարջ, անապակ, հայ քրիստոնյա, պսակադրության ուխտ, հասկացությունները և արտահայտությունները, վերլուծել գործած մեղքերը խոստովանելու անհրաժեշտությունը: Գ մակարդակ Իմանա՝ խորհուրդների հիմնական իմաստը, դրոշմի խորհրդի ժամանակ մյուռոնով դրոշմվող մարմնի մասերը, յուրաքանչյուր խորհրդի կատարման համարանհրաժեշտ պայմանները և խորհրդանիշները /իրերը/: Կարողանա՝ խաչակնքել և բացատրել խաչակնքման նպատակը, բացատրել մանուկների մկրտության պատճառները, գնահատել խորհուրդների դերը և	6-րդ դաս. դասագիրք, էջ 28-39

		հիմնավորել խորհուրդներին մասնակիցլինելու կարևորությունը:	
51/1	Հայոց եկեղեցու տոները (Ավետում և Ծնունդ, Ս. Սարգիս, Ս. Վարդանանց, Բուն Բարեկենդան և Մեծ պահք, Տյառնընդառաջ, տոները)	Ա մակարդակ Իմանա՝ ինչ է տոնը, պետական և եկեղեցական մի քանի կարևոր տոներ: Կարողանա՝ բացատրել շարժական և անշարժ տոների տարբերությունները: Բ մակարդակ Իմանա՝ Հայոց եկեղեցու տոների հիմնական խմբերը: Կարողանա՝ բացատրել տաղավար տոն, տերունական տոն, պահքի օրեր, սուրբ, տոնացույց, բառերն ու արտահայտությունները: Գ մակարդակ Իմանա՝ տաղավար հինգ տոները: Կարողանա՝ թվարկել տերունական և սրբերին նվիրված տոներ:	6-րդ դաս. դասագիրք, էջ 45-59
52/1	Հայոց եկեղեցու տոները (Ծաղկազարդ, Ս. Հարություն, Համբարձում, Կաթողիկե Ս. Էջմիածին տոները)		6-րդ դաս. դասագիրք, էջ 61-68
53/1	Հայոց եկեղեցու տոները (Պայծառակերպություն, Վերափոխում, Խաչվերաց, Վարագա խաչ, Թարգմանչաց տոները)		6-րդ դաս. դասագիրք, էջ 70-82
54/1	Գործնական աշխատանք №2		
55/1	Հիսուս խոսում է առակներով:	Ամակարդակ Իմանա՝ առակների հիմնական բովանդակությունը: Կարողանա՝ վերլուծել առակների բովանդակությունը: Բ մակարդակ Իմանա՝ առակների մանրամասները: Կարողանա՝ համեմատել առակների բովանդակությունները: Գ մակարդակ Իմանա՝ առակների բացատրություն մանրամասները: Կարողանա՝ մեկնաբանել առակների իմաստը:	5-րդ դասարանի դասագիրք, էջ 66-75
56/1	Հին հայոց հավատալիքները:	Ա մակարդակ Իմանա՝ հեթանոս հայերի կողմից պաշտվող բնության երևույթները, բարի և չար ոգիների մասին, հեթանոս հայերի կարծիքով աշխարհի բաղկացուցիչ մասերը, հայոց հեթանոսական դիցարանի մի քանի աստվածների անուններ: Կարողանա՝ թվարկել հեթանոսական պաշտամունքի կենտրոնները Հայկական լեռնաշխարհում: Բ մակարդակ Իմանա՝ բարի և չար ոգիների անունները, աշխարհաստեղծման հայոց առասպելը, հեթանոսական դարաշրջանի առասպելների անունները:	7-րդ դասարանի դասագիրք, էջ 5-8

	;	Կարողանա՝բացատրել դիվահար, Շահապետ վայրաց, Բախտ, տոտեմիզմ, Անդունդ, հեթանոսություն, Միերի դուռ անուններն ու հասկացությունները, համեմատել Արամազդի տաճարը Դելփյան տաճարի հետ, բացատրել Ամանոր և Վանատուր աստվածների դերը հայ իրականության մեջ: Գ մակարդակ Իմանա՝ Աշտիշատի տաճարի տեղում հետագայում կառուցված Ս. Կարապետ վանքի մասին, իմանա Վանի թագավորության գլխավոր աստվածների անունները: Կարողանա՝ մեկնաբանել հայոց հեթանոսական առասպենելների առանձնահատկությունները, բացատրել Իշպուինի արքայի կողմից ժայռի վրա նվաճված ժողովուրդների աստվածների անունները փորագրման պատճառները:	
57/1	Քրիստոնեության մուտքը Հայաստան: Հայոց առաջին լուսավորիչներ	Ա մակարդակ Իմանա՝ Քրիստոնեությունը Հայաստանում առաջինը քարոզած առաքյալների անունները, առաքյալների գործունեության կենտրոնները: Կարողանա՝ բացատրել Հայոց եկեղեցու՝ Առաքելականանվանումը: Բ մակարդակ Իմանա՝ Եդեսիայում գահակալողԱբգար թագավորի մասին, Հայաստանում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հանդիպման վայրը, Սանատրուկ արքայի վերաբերմունքը առաքյալների և նրանց հետևորդների նկատմամբ Կարողանա՝ վերլուծել Սանատրուկ արքայի գործունեության պատճառները, բացատրել Առաքելական եկեղեցի, Սրբազան ավանդություն, Աթոռ Թադեի արտահայտությունները: Գմակարդակ Իմանա՝ԹադեոսևԲարդուղիմեոսառաքյալներիԱվետարանումհիշատակվածանունները, առաքյալներինահատակությանվայրերումկառուցվածեկեղեցիներիանունները Կարողանա՝համակարգվածներկայացնելևմեկնաբանել Հայաստանումառաքյալներիգործունեությունըևդրաարդյունքները	7-րդ դասարանի դասագիրք, էջ 22-25
58/1	Քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն	Ա մակարդակ Իմանա՝ Պարսկաստանում տեղի ունեցած հեղաշրջումը, Գրիգորի՝ Խոր վիրապ նետվելու մասին, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու տարեթիվը և այդ ժամանակ իշխող արքայատոհմը, Հայոց հոգևոր կենտրոնը, Մայր տաճարի	7-րդ դասարանի դասագիրք, էջ 33-37

		նավակատիքի տարեթիվը և օրը Կարողանա՝ վերլուծել Տրդատի հիվանդանալու պատճառները, բացատրել Էջմիածին անվան ստուգաբանությունը Բ մակարդակ Իմանա՝ քրիստոնեության պետական կրոն հռչակելու հետ կապված կարևոր իրադարձությունները և սրբազան ավանդությունը, Ագաթանգեղոս պատմիչի մասին, Գրիգոր Լուսավորչի տեսիլքը Կարողանա՝ բացատրել դարձի բերել, վկայարան, տեսիլք, Սուրբ սեղան, սրբերի մասունքներ բառերն ու հասկացությունները, ներկայացնել քրիստոնեության հաստատման ընթացքը Հայաստանում, վերլուծել Գրիգոր Լուսավորչի Կեսարիայում եպիսկոպոս, իսկ Աշտիշատում՝ կաթողիկոս ձեռնադրվելու պատճառները Գ մակարդակ Իմանա՝ Վաղարշապատում VII դ. կառուցված վկայարանները, քրիստոնեության ընդունման անհրաժեշտության հետ կապված պատմական դեպքերն ու երևույթները, Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնադրված եկեղեցիները, Տրդատ արքայի մկրտության տարեթիվը և վայրը Կարողանա՝ մեկնաբանել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու անհրաժեշտությունը, բացատրել հայոց դարձի պատմական նշանակությունը:	
59/1	Հայոց եկեղեցու ամրապնդումը: Ս. Սահակ Պարթև և Մ. Մաշտոց»	Ա մակարդակ Իմանա՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մասին կենսագրական տեղեկություններ,Վռամշապուհ արքայի գործունեության մասին, Հայոց գրերի ստեղծման վայրը, տարեթիվը, հայերեն թարգմանված առաջին նախադասությունը, Աստվածաշնչի հայերեն թարգմանության անվանումը, Սուրբ Թարգմանչաց տոնի օրը Կարողանա՝ բացատրել պարսից արքայի կողմից Սահակ Պարթևին՝ կաթողիկոսությունից զրկելու և աքսորելու պատճառները, բացատրել Մաշտոցի և Սահակ Պարթևի մտահոգությունը՝ աղվան և վրաց ժողովուրդների գիր ունենալու համար Բ մակարդակ Իմանա՝ Հայոց գրերի ստեղծման նախադրյալները, գրերի գյուտից հետո ձեռնարկված գործողությունները Կարողանա՝ բացատրել ազգային ինքնագիտակցություն, համազգային կրոն,	7-րդ դասարանի դասագիրք, էջ 62-66

		արտահայտությունները, գնահատել հայոց գրերի գյուտի նշանակությունը Գ մակարդակ Իմանա՝ Սահակ Պարթև կաթողիկոսի գործունեության հետ կապված կարևորագույն իրադարձությունները, Սահակ Պարթևի գրական, մշակութային ժառանգության մասին Կարողանա՝ գնահատել Սահակ Պարթևի ազգանվեր գործունեությունը, համեմատել Տրդատ Մեծ-Գր. Լուսավորիչ և Վռամշապուհ-Սահակ Պարթև համագործակցությունը	
60/1	Տիեզերական ժողովներ	Ա մակարդակ Իմանա՝ առաջին երեք տիեզերական ժողովների գումարման վայրերը և տարեթվերը, բնագրի անվանումը, որի մեջ ամբողջացան առաջին երեք տիեզերական ժողովների որոշումները Կարողանա՝ բացատրել առաջին տիեզերաժողովների գումարման պատճառները Բ մակարդակ Իմանա՝ Նիկեայի, Կ.Պոլսի և Եփեսոսի տիեզերաժողովների հրավիրման պատճառները, Արիոսի, ՄակեդոնիևՆեստորիառաջքաշածուսմունքները Կարողանա՝ բացատրել աղանդ, աղանդավորություն, հերետիկոսություն, տիեզերական ժողով հասկացությունները Գ մակարդակ Իմանա՝Հավատոհանգանակը Կարողանա՝ ներկայացնել առաջին երեք ժողովների ժամանակ ընդունված որոշումները	7-րդ դասարանի դասագիրք, էջ 70-72
61/1	Քաղկեդոնի ժողովը և հայոց եկեղեցին	Ա մակարդակ Իմանա՝ Քաղկեդոնի, Դվինի I և II ժողովների գումարման տարեթվերը, Քաղկեդոնի ժողովի որոշումների հանդեպ Հայոց եկեղեցու վերաբերմունքի մասին Կարողանա՝ բացատրել Հայոց եկեղեցու՝ Քաղկեդոնի ժողովին չմասնակցելու պատճառները Բ մակարդակ Իմանա՝ Քաղկեդոնի ժողովի հրավիրման պատճառների, Եվտիքեսի և նրա քարոզների մասին, Դվինի I և II ժողովների ընդունած որոշումների մասին Կարողանա՝ բացատրել երկաբնակ, միաբնակ, միաբնակ-ուղղափառ հասկացությունները Գ մակարդակ	7-րդ դասարանի դասագիրք, էջ 83-85

		Իմանա՝ Քաղկեդոնի ժողովի ընդունված բանաձևը, Հայաստանում նեստորականների հիմնավորվելու մասին, Դվինի I և II ժողովները հրավիրած կաթողիկոսների անունները Կարողանա՝ վերլուծել քաղկեդոնականության նկատմամբ Հայոց եկեղեցու դիրքորոշման պատճառները և գնահատել դրա պատմական նշանակությունը, համեմատել Դվինի I և II եկեղեցական ժողովների որոշումները:	
62/1	Հայ առաքելական եկեղեցու արտաքին և ներքին կառուցվածքը:	Ա մակարդակ Իմանա՝ Հայոց առաջին եկեղեցիների հիմնադրման ժամանակաշրջանը: Կարողանա՝ նկարագրել իրենց բնակավայրի եկեղեցու արտաքին կառուցվածքը: Բ մակարդակ Իմանա՝ Հայկական եկեղեցիների արտաքին կառուցվածքը, եկեղեցում պատարագի Սուրբ սեղանի և մկրտության ավազանի գտնվելու վայրը: Կարողանա՝բացատրել հիմնօրհնեք և վանք հասկացությունները: Գմակարդակ Իմանա՝Հայկականեկեղեցիներիներքինկառուցվածքը: Կարողանա՝նկարագրել իրենց բնակավայրի եկեղեցու ներքին կառուցվածքը և համեմատել հայկական եկեղեցու հատակագծի հետ, բացատրել եկեղեցու դերը հայ մարդու համար:	6-րդ դասարանի դասագիրք, էջ 14-23
63/1	Ազատ կամք և բանականություն:	Ա մակարդակ Իմանա՝ «Ազատ կամք» հասկացության բովանդակությունը Կարողանա՝ բացատրել ազատ կամքի կարևորությունը յուրաքանչյուր անհատի կյանքում Բ մակարդակ Իմանա՝ «Դուք ազատության կոչված եք», երկու տեսակետ՝ դետերմինիզմ և ինդետերմինիզմ, Կարողանա՝ ցույց տալ դետերմինիզմ և ինդետերմինիզմ ուսմունքների կեղծ լինելը Գ մակարդակ Իմանա՝ կապը ազատ կամքի, բանականության և կատարած արարքի համար պատասխանատվության միջև Կարողանա՝ ցույց տալ, որ քրիստոնեական վարդապետությունը լուսավորում է մարդու բանականությունը, Ադամի օրինակը:	10-րդ դասարանի դասագիրք, էջ 42-49

64/1	Մարդ անհատի դերը և առաքելությունը:	Ա մակարդակ Իմանա՝ մարդ անհատի եզակի դերը տիեզերքում Կարողանա՝ պարզաբանել աստվածանման և աստվածապատկերով մարդու առավելությունները տիեզերքում Բ մակարդակ Իմանա՝ մեղքի բովանդակությունը, մեղքը՝ որպես մարդն իր առաքելությունից և կոչումից զրկող գործողություն Կարողանա՝ պարզաբանել եկեղեցու դերը մեղքից ազատվելու գործում Գ մակարդակ Իմանա՝ եկեղեցու դերը ազգի պահպանման գործում Կարողանա՝ ներկայացնել, որ մեղքից ազատվելու միակ ճանապարհը սեփական ջանքերն ու Աստվածային շնորհն են	10-րդ դասարանի դասագիրք, էջ35-40
65/1	Հայոց եկեղեցու ժամերգությունները և Ս. Պատարագ	Ա մակարդակ Իմանա՝ հայոց եկեղեցու ծեսերը Կարողանա՝ ներկայացնել ծեսերն ու դրանց խորհուրդը Բ մակարդակ Իմանա՝ ինչ է աղոթքը, ժամերգությունն ու պատարագը Կարողանա՝ ցույց տալ դրանց կարևորությունը Գ մակարդակ Իմանա՝ աղոթքը՝ որպես Աստծո հետ հարաբերվելու առաջնային միջոց, ժամերգության ընդհանրական աղոթքի ծես լինելու և պատարագի առանցքային նշանակություն ունենալու մասին Կարողանա՝ ներկայացնել աղոթքի տեսակներն ու պատարագի բաղադրիչները	10-րդ դասարանի դասագիրք, էջ117-120
66/1	Հոգևոր բարեպաշտական սովորույթներ:	Ա մակարդակ Իմանա՝ հոգևոր բարեպաշտական սովորությունները Կարողանա՝ տալ պատկերացում հոգևոր բարեպաշտական սովորույթների՝ որպես ընդհանրական եկեղեցուն և հայոց եկեղեցուն բնորոշ արարողությունների վերաբերյալ Բ մակարդակ Իմանա՝ առավել տարածում գտած մի շարք հոգևոր բարեպաշտական արարողությունների մասին Կարողանա՝ բացատրել խաչակնքման, մոմավառության, խնկարկության, երկրպագության, տնօրհնեքի, անդաստանի, գերեզմանօրհնեքի, հոգեհանգստի իմաստը Գ մակարդակ Իմանա՝ հոգևոր բարեպաշտական արարողությունների	10-րդ դասարանի դասագիրք, էջ124-129

		կատարման կարգը Կարողանա՝ բացատրել խաչակնքման, մոմավառության, խնկարկության, երկրպագության, տնօրինեքի, անդաստանի, գերեզմանօրինեքի, հոգեհանգստի և մատաղի իմաստն ու խորհրդաբանությունը	
67/1	Կրկնություն		
68/1	Ամփոփիչ կրկնություն		